Հայտերի լրացման ուղեցույց

Հայտը պետք է լրացնել՝ կատարելով հետևյալ գործողությունները.

1. **Անուն** դաշտում պետք է լրացնել հայտը ներկայացնող անձի անունը:
2. **Ազգանուն** դաշտում պետք է լրացնել հայտը ներկայացնող անձի ազգանունը:
3. **Կազմակերպություն** դաշտում հայտատուն պետք է մուտքագրի այն կազմակերպության անունը, որի ներկայացուցիչն է:
4. **Հեռ.** դաշտում հայտատուն պետք է լրացնի իր՝ հասանելի հեռախոսահամարները:
5. **Էլ. փոստ** դաշտում հայտատուն պետք է լրացնի իր էլեկտրոնային փոստի հասցեն:
6. **Մարզ** դաշտում լրացվում է այն մարզը, որը ներկայացնում է հայտատուն:
7. **Համայնք** դաշտում լրացվում է հայտատուի ներկայացրած համայնքի անվանումը:
8. **Համայնքի ղեկավարի անուն ազգանունը** դաշտում անհրաժեշտ է լրացնել Ձեր ներկայացրած համայնքի ղեկավարի անուն ազգանունը:
9. **Հայտի բովանդակությունը** դաշտում առավելագույնը 200 բառի շրջանակներում նկարագրեք և հիմնավորեք՝ ինչո՞ւ է հատկապես Ձեր համայնքն արժանի այս անվանակարգով մրցանակաբաշխությանը: Շարադրանքում պետք է լինեն կոնկրետ փաստեր, չափելի ցուցանիշներ, ազդեցության գնահատական: Թեմատիկ հայտերի դեպքում փաստերը պետք է լինեն բացառապես անվանակարգի թեմայով, «Լավագույն համայնք» անվանակարգի համար հնարավորինս շատ ասպեկտներով: Չեն ընդունվի այն հայտերը, որտեղ համայնքային ամենօրյա լիազորությունների շրջանակներում կատարված աշխատանքը կներկայացվի որպես «Լավագույն համայնք» անվանակարգին արժանանալու հիմնավորում:
10. **Մանրամասն՝ հայտի տեքստը** դաշտում նկարագրեք առավելագույնը մինչև 1000 բառի շրջանակներում: Շարադրանքում պետք է լինեն կոնկրետ փաստեր, չափելի ցուցանիշներ, ազդեցության գնահատական ավելի մանրամասն: Թեմատիկ հայտերի դեպքում փաստերը պետք է լինեն բացառապես

անվանակարգի թեմայով, «Լավագույն համայնք» անվանակարգի համար հնարավորինս շատ հիմնավորումներ:

11. **Ընտրեք անվանակարգը** դաշտում ներկայացված անվանակարգերի ցուցակից անհրաժեշտ է ընտրել մեկ անվանակարգ:

12. Յուրաքանչյուր հայտով հայտատուն կարող է դիմել մրցույթին միայն մեկ անվանակարգի համար: Եթե հայտատուն ցանկանում է մրցույթին դիմել մեկից ավելի անվանակարգերում, նա պետք է յուրաքանչյուր անվանակարգի համար առանձին հայտ լրացնի:

13. Հայտը կարող եք լրացնել հետևյալ հղումով՝ և ուղարկել այն սեղմելով **Ուղարկել** կոճակը: